ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՒՂԵՐՁ ՏԱՐԱԾԱԵՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ

Ջոզեֆ Սմիթ՝ ընտրյալ մարգարե և տեսանող

Երեց Բրյուս Դ. Փորթեր, ԱԵՏ նախագահ (մինչև 2016թ. դեկտեմբեր)

Քրիստոսի ծննդից մոտ 2000 տարի առաջ Հովսեփը Եգիպտոսից մարգարեացավ, որ վերջին օրերում Աստված կբարձրացնի մի «ընտրյալ տեսանող» (2 Նեփի 3.6–7), որը առաջ կբերի Աստծո խոսքը Իսրայելի ժառանգների համար և մեծ կլինի, ինչպես Մովսեսը (հատված 9)։ Նա նաև մարգարեացավ, որ այդ ընտրյալ տեսանողը կկոչվի իր հոր անվամբ՝ նրա անունը կլինի Ջոզեֆ։ Այս մարգարեությունը կատարվեց Ջոզեֆ Սմիթ Կրտսերի կյանքով և գործունեությամբ, ում կոչել էին իր հոր՝ Ջոզեֆ Սմիթ Ավագի անունով, և ով ստեղծեց Մորմոնի Գիրքը մեր ժամանակներում։

Տերն օգտագործեց Ջոզեֆին և նրա կարճ կյանքի 38 տարիները, որպեսզի վերականգնի Իր Եկեղեցին և Թագավորությունը երկրի վրա տիրող դարավոր հավատուրացության և շեղումներից հետո։ Տիրոջ ղեկավարությամբ, Նրա զորությամբ և իշխանությամբ Ջոզեֆ Սմիթը.

- Երկնային սուրհանդակներից ստացավ Ահարոնյան և Մելքիսեդեկյան քահանայության իշխանությունը։
- Ստացավ Սուրբ Առաքելականության բանալիները։
- Թարգմանեց հնագույն գրառումների ժողովածուն, որը հայտնի է որպես *Մորմոնի Գիրք*, որը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին։
- 1830 թվականի ապրիլի 6-ին կազմավորեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այն կառուցվածքով, որն ի սկզբանե հիմնադրել էր Ինքը՝ Փրկիչը։
- Ստացավ բազմաթիվ հայտնություններ հավերժական ճշմարտությունների և վարդապետության վերաբերյալ, Եկեղեցու կազմակերպման, իրադարձությունների մասին, որոնք ի հայտ կգան վերջին օրերում և փառահեղ օրհնությունների, որոնք սպասվում են հավատարիմներին։ Այս հայտնությունները գտնվում են *Վարդապետություն և Ուխտերում*։
- Վերահսկեց երկու տաճարների շինարարությունը և Կիրթլենդի Տաճարում ստացավ հատուկ բանալիներ Եղիասից, Մովսեսից ու Եղիայից (ՎևՈւ 110)։
- Հայտնությամբ ստացավ Մովսեսի գրքի տեքստը, ինչպես նաև աստվածային զորությամբ թարգմանեց Աբրահամի գիրքը, և դրանք միասին ընդգրկված են *Թանկագին Մարգարիտում*։
- Տասնյակ հազարավոր նորադարձների հավաքեց Եկեղեցում և հիմնադրեց Նավու քաղաքը, մի քաղաք Իլինոյս նահանգում, որը նույնքան մեծ էր, որքան Չիկագոն էր այդ ժամանակ։
- Բացահայտեց տաճարային արարողությունները, որոնք կապում են ընտանիքները և սերունդները միասին և պատրաստում վերջին օրերի սրբերին հավերժական կյանքի համար։

Ինչպես Ջոն Թեյլորն է գրել ՎևՈւ 135-ում. «Ջոզեֆ Սմիթը՝ Տիրոջ Մարգարեն և Տեսանողը, ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա» (ՎևՈւ 135.3)։

Հին և նոր ժամանակների բոլոր մյուս մարգարեների նման, մարգարե Ջոզեֆ Սմիթը կատարյալ մարդ չէր։ Շատ անգամներ Տերը խրատել կամ ուղղել է նրան, ինչպես կարդում ենք այսօր Վարդապետություն և Ուխտերում։ Միայն Հիսուս Քրիստոսն էր ապրում կատարյալ կյանքով, և միայն Նա էր աստվածային էակ և Աստծո փաստացի Որդին։ Թեև մեր փառահեղ Քավիչը կանչել և կարգել է մարգարե Ջոզեֆ Սմիթին Վերականգնման աշխատանքի համար նույնիսկ նախքան աշխարհի ստեղծումը, մարգարեն պատվով իրագործեց այդ կոչումն ու առաքելությունը, նախքան իր նահատակությունը։ «Նա ապրեց փառքով և մահացավ փառքով՝ Աստծո և իր ժողովրդի աչքի առաջ. և ինչպես հին ժամանակների Տիրոջ օծյալներից շատերը, նա կնքեց իր առաքելությունը և իր գործերը սեփական արյամբ» (ՎևՈւ 135.3)։

Բանալիները, որ վերականգնվեցին ու տրվեցին մարգարե Ջոզեֆ Սմիթին, երկրի վրա են այսօր, և մարգարեների ու առաքյալների անխախտ շղթան փոխանցել է այդ բանալիները մինչև մեր օրերը։ Մենք առաջնորդվում ենք Աստծո մարգարեի և ընտրված առաքյալների կողմից, ովքեր ունեն բոլոր բանալիները, որոնք անհրաժեշտ են, որ Աստծո գործը առաջ գնա ամբողջ երկրի վրա «համարձակ,

ազնվաբարո և անկախ, մինչև որ թափանցի ամեն մայրցամաք, ամեն կլիմայական գոտի, ծածկի ամեն երկիր, և հնչի ամեն ականջին, մինչև Աստծո նպատակներն իրականանան և Մեծ Եհովան ասի, որ աշխատանքը կատարված է»:

Ես վկայում եմ մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության մասին: Ես վկայում եմ նրա ազնվության, բարության և նրա հավատարմության մասին մինչև իր կյանքի վերջը: Ես գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ, որ Եկեղեցին, որը նա հիմնադրել է Տիրոջ ղեկավարությամբ և առաջնորդությամբ, Տիրոջ ճշմարիտ և կենդանի Եկեղեցին է Երկրի վրա: ■

Չափահաս երիտասարդ ամուրիների համաժողով

Մարիետա Կարապետյան, Երևան ճյուղ

Երիտասարդ ամուրիների 2016 թվականի համաժողովը տեղի ունեցավ հուլիսի 13–16 Աղվերանում: Այն հագեցած էր հոգևոր ելույթներով, զվարճանքի ժամերով, կինոդիտումով, խաղերով, սպորտային ու պարային միջոցառումներով: Հրավիրված էին Եկեղեցու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի ղեկավար պաշտոնյաներ, այդ թվում՝ երեց Քեչերը կնոջ հետ: Համաժողովի կարգախոսն էր. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20):

Երեց և քույր Մորթենսենները երիտասարդներին ուսուցանեցին Աստծուն և մարդկանց սիրելու մասին: Երիտասարդ չափահասները կարդացին հատվածներ սուրբ գրություններից և քննարկեցին, թե սերն ինչպես է առնչվում գործողության հետ: Եթե սիրում ենք Երկնային Հորը, ապա ցույց ենք տալիս դա Նրան՝ պահելով պատվիրանները: Եթե սիրում ենք մարդկանց, ապա օգնության ենք հասնում և ծառայում ու բարձրացնում ենք նրանց տարբեր եղանակներով: Նա նաև կարևորեց, որ պետք է կարողանալ սիրել բոլորին՝ ոչ միայն ծանոթներին, այլև անծանոթներին, ինչպես նաև աղոթել մեր թշնամիների և նրանց համար, ովքեր վիրավորել են մեզ:

Նախագահ և քույր Բոսթրոմները ուսուցանեցին «Համբերել մինչև վերջ» թեման: Նրանք ասացին, որ երբ մենք դեռ չէինք եկել այս երկիր, Երկնային Հայրը զգուշացրեց մեզ, որ այստեղ հանդիպելու ենք տարբեր դժվարությունների, բայց մենք մենակ չենք պայքարի. Նա մեզ կտա Սուրբ Հոգին, սուրբ գրությունները, կունենանք ապրող մարգարե: Այդ ամենը նման կլինի մի երկաթե ձողի, որն ամուր բռնելով, մենք կկարողանանք առաջանալ դեպի հավերժական կյանք: Նա համեմատեց մեր երկրային ճամփորդությունը մի նեղ ու վտանգավոր ոլորապտույտ ճանապարհի հետ, որը երբեմն զարհուրելի եզրեր ունի անդունդի վրա: Բայց դրա երկայնքով անցնում է մի ամուր երկաթե շղթա, որից բռնվելով, մենք կկարողանանք անցնել այդ ճանապարհը, և հասնել այն տեղը, որն արժանի է մեր կրած դժվարություններին:

Հետաքրքիր և ուսուցողական էր Գրիգոր Թադևոսյանի ուսուցումը «Լինել հաստատամիտ Քրիստոսում» թեմայով: Նա հորդորեց երիտասարդներին անսասան լինել

Համաժողովի մասնակիցները

հավատքում, չվախենալ շրջապատի մարդկանց բացասական կարծիքներից, ուրախ լինել, որ Աստծո ճշմարիտ Եկեղեցու անդամներն են: Նա նաև հույս հայտնեց, որ ցանկանում է տեսնել Եկեղեցու երիտասարդներին որպես բանիմաց, կարդացած, կրթված ու քաղաքավարի մարդկանց, ում հետ հետաքրքիր է զրուցելը, ովքեր բազմակողմանի գիտելիքներ ունեն լավագույն գրքերի, գիտության և այլ ասպարեզներում: Նա կոչ արեց, որ երիտասարդները ձգտեն ինքնապահով լինել և ասաց, որ երբ մենք պահում ենք Աստծո պատվիրանները և ծառայում ենք, Աստված մեզ առատ օրհնություններ է տալիս, այնպես որ մենք այլևս չենք բողոքի որևէ բանի պակասից:

Համաժողովը առատ էր հոգևոր երեկոներով: Դրանք անցկացվում էին ամեն օր: Այդ նպատակով ժամանել էր երեց Աստաշևը, ով սիրով պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին: Հաջորդ օրվա հոգևոր երեկոն անցկացրեցին երեց և քույր Քեչերները, որոնք ժամանել էին, որ ներկա գտնվեն, շփվեն Հայաստանի երիտասարդների հետ և օգտակար լինեն նրանց: Բերելով իրենց սեփական օրինակը, նրանք բոլորին ուսուցանեցին ամուսնության կարևորության մասին: Նրանք ասացին, որ հավերժական զուգընկեր ընտրելը էական է Աստծո փրկության ծրագրում և կարևորեցին հավատքի գործադրումն այդ ջանքերում:

Հաջորդ օրը նույնպես հրաշալի անցավ՝ հարստացնելով մեզ նոր ու կարևոր գիտելիքներով: Ուկրաինայից ժամանել էր ծագումնաբանության և ընտանեկան պատմության հարցերով տարածքի ղեկավարը՝ եղբայր Վորոբյովը, ինչպես նաև Կրոնի սեմինարիայի և ինստիտուտի պատասխանատու եղբայր Սեմյոնովը, ով ուսուցանեց, թե ինչ է ճշմարտությունը և ինչպես այն գտնել:

Համաժողովի ավարտին, Երևան մեկնելուց առաջ, երիտասարդ ամուրիները հավաքվեցին վկայության ժողովին: Նրանք կիսվեցին իրենց տպավորություններով, զգացումներով, վկայեցին իրենց հոգևոր աճի մասին, ասացին, որ իրենց վկայությունն ավելի է ամրացել, որ ձեռք են բերել նոր ընկերներ, կիսվեցին իրենց վկայություններով, որ գիտեն, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո միակ ճշմարիտ Եկեղեցին է երկրի վրա: Բոլորը զգում էին Հոգու ներկայությունն այնտեղ:

Որպես Համաժողովի մասնակից, կարող եմ ասել, որ Համաժողովից վերադառնում էինք որպես ավելի լավ, ավելի շատ գիտելիքներով մարդիկ, ոմանք ավելի ամուր վկայությամբ, ավելի հաստատամիտ Քրիստոսում: Բոլորը որոշակի քայլեր էին արել իրենց անձնական զարգացման ճանապարհին: Համաժողովի նպատակն իրականացել էր: ■

ՏԵՂԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Հանգստության օրը մարդու համար է

Նախագահ Ալլեն Բոսթրոմ, Հայաստան Երևան միսիա

Նայելով ետ, թե ինչն է ազդեցություն ունեցել իմ կյանքի վրա, տեսնում եմ մի քանի հիմնական սկզբունքներ և իրադարձություններ: Մեծագույն սկզբունքներից մեկը եղել է Հանգստության օրվա օրենքը և իմ հաճախումը Եկեղեցի: Ես շատ երախտապարտ եմ, որ իմ ծնողները սովորեցրել են ինձ վաղ հասակից պատվել և վայելել կիրակին:

Նմանապես վստահ եմ, որ նրանք, ովքեր մեծացել են Եկեղեցում, ժամանակ առ ժամանակ նայում են դրան որպես սովորական մի բանի: Իրականում ես հիշում եմ, որ նույնիսկ մանուկ հասակում դժգոհ էի սահմանափակումներից, որոնք մայրիկս դնում էր մեզ վրա, որպեսզի մենք սովորեինք հարգել Տիրոջ Կիրակին: Երևի իմ միսիայից առաջ էր, որ ես սովորեցի գնահատել այդ սահմանները:

Մարկոսը գրել է. «Շաբաթը մարդի համար եղավ, և ոչ թե մարդը շաբաթի համար» (Մարկոս 2.27): Մի քանի տարի առաջ համաժողովի իր ելույթում Նախագահ Նելսոնը որակեց այն որպես մեզ տրված Նրա պարգևը:

Ինձ համար այն դարձել է մի անգնահատելի արժեք ունեցող պարգև: Ես հիշում եմ, որ որպես քոլեջի երիտասարդ ուսանող ես պարտավորվեցի Տիրոջ առաջ, որ չեմ սովորելու կիրակի օրը: Դա ենթադրում էր գրքի ընթերցանություն շաբաթ օրը՝ մինչև ուշ երեկո, կամ ուսումնասիրության ժամեր երկուշաբթի օրը՝ վաղ առավոտյան: Այնուամենայնիվ, դա թույլ տվեց ինձ սպասել Հանգստության օրվան՝ որպես դադար ունենալու օրվա ուսման տքնաջան աշխատանքից: Դա պատճառ էր, որ ես

Նախագահ Բոսթրոմը զրուցում է Հայաստան Երևան շրջանի անդամների հետ

ավելի լավ պլանավորեի իմ գործերը և մեծարեի իմ կիրակնօրյա կոչումները: Ես երբեք չէի հարկադրի այդ պարտավորությունը մեկ ուրիշին, բայց այն օրհնել է իմ կյանքը:

Այս աշխարհը միշտ փոխվում է: Կան ճնշումներ և Հանգստության օրվան խանգարող հանգամանքներ յուրաքանչյուրի համար՝ Եկեղեցու ներսում, թե դրսում: Հայաստանում և Վրաստանում անհատներն ու ընտանիքները զերծ չեն դրանցից, չնայած ես զգում եմ, որ կիրակնօրյա պաշտամունքի ավելի մեծ հակվածություն կա այստեղ՝ այս քրիստոնյա ժողովուրդների մեջ, քան աշխարհի շատ մասերում: Այդուհանդերձ, շատերի համար կիրակիները դարձել են քիչ տարբերվող մյուս վեց օրերից:

Որպես Քրիստոսի Եկեղեցու անդամներ, մենք պետք է առաջնորդենք, հատկապես կիրակի օրը, ցույց տալով, որ մենք «օրինակ [ենք] հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով» (Ա Տիմոթեոս 4.12): Եթե շաբաթվա մեջ կա մի օր, որ մեր կյանքը պետք է ներկայացնի այդ սուրբ գրությունը, ապա դա կիրակի օրն է: Մենք պետք է լույս լինենք անդամների և բոլոր մարդկանց համար, ում հանդիպում ենք, լուսավորելով իրենց օրը և դարձնելով այն հատուկ՝ բոլոր մյուս օրերից:

Հուսով եմ, որ մենք հատուկ աղոթք ենք հղում շաբաթ երեկոյան, որ կարողանանք ցույց տալ հաստատուն հոգևոր սեր, բարություն, և համբերություն Եկեղեցում կիրակի օրը: Խնդրում եմ, աղոթեք ձեր սրտում ողջ կիրակի օրը, որ դուք կարողանաք հատուկ ինչ-որ բան անել գոնե մեկի համար, եթե ոչ շատերի, ում դուք կհանդիպեք: Որսացեք այն պահը, երբ կարող եք մի հատուկ ժպիտ պարգևել որևէ մեկին, ով դրա կարիքն ունի: Փնտրեք հնարավորություններ մեղմացնելու ուրիշի բեռը՝ հասկացնելով, որ դուք մտածում եք նրանց մասին: Կիսվեք անկեղծ հաճոյախոսությամբ մեկի հետ, ով օրհնել է ձեր կամ ուրիշների կյանքը:

Իհարկե, այդ օրը ոչ միայն ուրիշներին ծառայելու համար է, այլ նաև ձեզ տրված մի օր է, որը նպաստում է ձեր էմոցիոնալ և հոգևոր աճին: Յուրաքանչյուր կիրակի օրվա կարևոր մասը՝ հաղորդությունից ճաշակելու հնարավորությունն է: Նստել և ինքնավերլուծությամբ նայել անցած շաբաթվա իրադարձություններին, . . . վայելել լավ բաները, որոնք դուք արել եք: Ապա մտովի և առանց վարանելու ուխտ անել Տիրոջ հետ, որ հաջորդ շաբաթն ավելի լավը կլինի:

Ես գիտեմ, որ Հանգստության օրվա օրենքով ապրելու շնորհիվ ձեր կյանքը կօրհնվի: Պատվելով Հանգստության օրը, դուք «կկարողանա[ք] էլ ավելի անբիծ պահել [ձեզ] աշխարհից» (ՎԱՌ 59.9): Ձեր ընտանիքը կօրհնվի միասնության ավելի ամուր զգացումով: Դուք ավելի մտերիմ հարաբերություն կկառուցեք Երկնային Հոր հետ: Դուք ավելի մեծ սեր կտածեք ձեր ճյուղի անդամների հանդեպ: Դուք ավելի մեծ խանդավառությամբ կվերաբերվեք Ավետարանին և ավելի մեծ ուրախություն և խաղաղություն կզգաք կյանքում առհասարակ:

Թող Տերն օրհնի ձեզ, որ Հանգստության օրը դարձնեք հատուկ պարգև Երկնային Հորից: ■

Ես մորմոն եմ

Ալվարդ Մուրադյան, Գյումրի ճյուղ

Երբ ես սովորում էի Համալսարանում, մենք ունեինք մի դասախոս, որը շատ պատկառելի տղամարդ էր, հարգված և մի քիչ խիստ: Դասերի ժամանակ ուսանողներն աշխատում էին նստել հետևի շարքերում ու միշտ վախեցած էին: Ես միշտ նստում էի առաջին շարքում և ուշադիր էի նրա բոլոր դասերին: Մի օր այդ դասախոսը խոսեց կրոնների մասին ու ասաց, որ եթե ուզում ենք լավ մարդիկ դառնալ, պիտի հեռու մնանք կասկածելի կրոններից, որովհետև դրանք մեզ շեղում են և չեն թողնում, որ ուշադիր լինենք դասերին: Հետո ավելացրեց. «Օրինակ վերցրեք Ալվարդից: Նա երբեք դասերից չի ուշանում, միշտ ուշադիր է ու միշտ պատրաստ դասերին, որովհետև չի հաճախում կրոնական ժողովների»: Ես այդ ժամանակ լսեցի ամեն ինչ ու հետո ասացի. «Կարո՞ղ եմ մի բան ասել»: Դասախոսը շատ ուրախացավ, ասաց. «Այո, իհարկե, արի ամբիոնի մոտ և այստեղից ասա»: Ես գնացի ամբիոնի մոտ ու սկսեցի պատմել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին ու ամենավերջում ասացի. «Ես մորմոն եմ և ուրախ եմ, որ իմ կրոնն ինձ այսպես է դաստիարակել: Ես մեծացել եմ մորմոնների մեջ»: Այդ դասախոսը դրանից հետո այնքան էլ լավ չէր վերաբերվում ինձ, բայց երբ ավարտում էինք համալսարանը, երեկույթ կազմակերպեցինք ու այդ երեկույթի ժամանակ աշխարհիկ ուսանողները իրենց լավ չդրսևորեցին, իսկ ես հանգիստ նստած էի ու մեկ-մեկ պարում էի: Այդ դասախոսը մոտեցավ ինձ ու ասաց. «Ես հարգում եմ ձեր անձն ու հավատքը: Ես տեսել եմ ձեր դաստիարակությունը»:

Ես հպարտ եմ, որ մեծացել եմ այս Եկեղեցում ու ստացել եմ Աստծո դաստիարակությունը, լսել ու պահել եմ պատվիրանները, որոնք փոխել են իմ կյանքը: Իմ կյանքում ես առաջնորդվում եմ սուրբ գրության այս հատվածով. «Թող ձեր լույսն այնպես շողա այս ժողովրդի առաջ, որ նրանք կարողանան տեսնել ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որը երկնքում է» (3 Նեփի 12.16):

Ես վկայում եմ, որ Աստված տեսնում է մեր գործերը ու տալիս է օրհնություններ՝ համաձայն մեր գործերի: Պատահում է, որ դժվարանում ենք պահել պատվիրանները, կամ սխալվում ենք, բայց եթե հիշենք, որ մենք Աստծո զավակներն ենք ու հաշվենք մեր օրհնությունները, ապա պարտավոր ենք ամեն իրավիճակում ցույց տալ Աստծո լույսը և մեր կյանքը կօրհնվի ու հետո չենք ամաչի մեր ապրած կյանքի համար: Աստծո պատվիրանները տրված են, որ պաշտպանեն մեզ և օրհնեն մեր կյանքը, պատվիրանները ամենալավ խորհուրդներն են, որ Աստված տալիս է մեզ: Մեր Երկնային Հայրը մեզ շատ է սիրում և միշտ հուշում է, թե ինչպես վարվենք: Մենք պարզապես պետք է միշտ լսենք Սուրբ Հոգու հուշումները: ■

Ալվարդ Մուրադյան

ԻՆՉ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՍ ՈՒՆԵՑԱ ԻՄ ՄԻՍԻԱՅՈՒՄ

Իմ սրտի իղձն է՝ «ապաշխարություն աղաղակ[ել] ամեն ժողովրդի»

Լիանա Խումարյան, Արաբկիր ճյուղ

«Ա՛խ, երանի ես մի հրեշտակ լինեի, և կարողանայի ունենալ իմ սրտի իղձը, որ ես առաջ գնայի և խոսեի Աստծո փողով, երկիրը ցնցելու ձայնով, և ապաշխարություն աղաղակեի ամեն ժողովրդի: Այո, ես ամեն հոգու կհայտարարեի, որոտի ձայնի պես, ապաշխարություն և փրկագնման ծրագիրը, որպեսզի նրանք ապաշխարեին և զային դեպի մեր Աստվածը, որպեսզի ողջ երկրի երեսին այլևս վիշտ չլիներ» (Ալմա 29.1–2):

Մարգարե Ալմայի այս խոսքերն անչափ ոգևորեցին ինձ միսիայում ծառայելու իմ որոշումը կայացնելիս: Ես իմ ողջ սրտով կամենում էի տարածել ավետարանի բարի լուրը մարդկանց զավակներին: Ես ուզում էի հրավիրել բոլորին գալ դեպի իրենց Աստվածը՝ Հիսուս Քրիստոսը, իրենց հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով: Այդ կերպ վարվելու հնարավորություն ես ունեցա իմ ողջ միսիայի ընթացքում, որը ծառայել եմ Բեյքերսֆիլդ, Կալիֆորնիա միսիայում:

Իմ նպատակն էր խոսել բոլորի հետ, բոլորի հետ կիսվել իմ վկայությամբ, չունենալ ափսոսանքի զգացում ինչ-որ բան չանելու կամ թերի անելու պատճառով: Չէ՞ որ Փրկիչը խաչվեց բոլորիս համար, ապա ինչո՞ւ չասել այս ամենը բոլորին: Ինչու չասել, թե ինչու եմ այդտեղ և ում եմ ներկայացնում: Բայց ամեն անգամ ինքս իմ մեջ թերություններ, սխալներ ու թուլություններ էի գտնում: Փորձում էի ուղղել, բայց կրկին սայթաքում էի:

Մի օր, երբ զուգենկերուհուս հետ խոսում էինք աստվածաշնչյան հերոսների մասին, նա ասաց, որ իրեն Պետրոսին է նմանեցնում: Պետրոսը շատ էր սիրում Հիսուսին, նա իսկապես ցանկանում էր լինելՀիսուս Քրիստոսի ճշմարիտ Առաքյալ, որի համար ջանք չէր խնայում: Բայց նրան միշտ ինչ-որ բան հետ էր պահում: Երբ Հիսուսն Իր Առաքյալների հետ Գեթսեմանի այգում էր, Նա նստեցրեց Իր աշակերտներին, Իր հետ վերցրեց միայն Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին և գնաց աղոթելու: Նա պատվիրեց նրանց արթուն մնալ, մինչ Ինքն առաջ գնաց ու աղոթեց Հորը: Մի ժամ էլ չէր անցել,

Լիանա Խումարյանը (ձախում) իր զուգընկեր միսիոների հետ

երբ Նա եկավ ու երեքին էլ քնած տեսավ: Այսպես Նա արեց երեք անգամ, և երեք անգամն էլ նրանց աչքերը ծանրացած էին: Փրկիչը երեք անգամ պատվիրեց նրան արթուն մնալ, բայց երեք անգամն էլ Պետրոսը թերացավ: Սակայն, նույնիսկ այդ ձախողումներից հետո Տերը դեռևս վստահում էր նրան, և նրան տվեց Իր արքայության բանալիները երկրի վրա: Այս խոսակցությունից հետո ես հասկացա, որ Տիրոջը ծառայելու համար անհրաժեշտ չէ, որ մենք կատարյալ լինենք: Նա կանչում է սովորական մարդկանց, արտասովոր գործերի համար: Երբ մենք Տիրոջը ցույց ենք տալիս Նրան ծառայելու մեր ցանկությունը, Նա մեծացնում է մեր ունակությունները, և Տիրոջ գործը առաջ է գնում:

Տիրոջ գործը հրաշալի է ընթանում Կալիֆորնիայի Բեյքերսֆիլդ միսիայում: Ես այդքան շատ սեր ու ջերմություն չէի զգացել մարդկանց նկատմամբ, որքան զգացի իմ ծառայության ժամանակ: Ես սիրում եմ այդ մարդկանց: Մենք շատերին սովորեցրինք և հնարավորություն ունեցանք իմանալ նրանց փորձառությունների մասին ու լսել նրանց վկայությունները: Ամենից հրաշալին այն էր, թե ինչպես էր ավետարանը փոխում նրանց կյանքը մեր աչքի առաջ: Ես ականատես եղա, որ դեպի լույս, խաղաղություն, երջանկություն, ջերմություն, գիտելիք, ուրախություն, բարություն, զորություն տանող ճանապարհը Հիսուս Քրիստոսն է: Եվ ամեն ոք կարող է դա անել:

Ես գիտեմ, որ միսիոներները կանչվում են Աստծո կողմից, Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ներկայացնելու և Նրա մասին վկայելու համար: Հիսուս Քրիստոսը կատարյալ է: Նա քավեց մեր մեղքերը: Նա ապրում է: Նրա ավետարանը ճշմարիտ է և այն կարող է գործել մեր կյանքում: ■

«Ե՛կ գործենք ջանասիրաբար»

Վարվառա Պողոսովա, Երևան ճյուղ

Ես որոշեցի միսիա գնալ, երբ դեռ մկրտված չէի: Մի անգամ մենք ֆիլմ էինք դիտում միսիոներական ծառայության մասին, այդ ժամանակ ես նոր էի պատրաստվում մկրտվել և մասնակցում էի միսիոներների հետ զրույցների: Այդ ֆիլմը մեծ տպավորություն գործեց ինձ վրա և ես լցվեցի միսիայում ծառայելու և մարդկանց օգնելու ցանկությամբ, որպեսզի լսեն ավետարանը:

Միսիայում ունեցած կարևոր փորձառություններից մեկն այն էր, որ ես ցանկություն ունեի ծառայել, բայց մինչև վերջ չէի գիտակցում դրա խորությունը, քանի որ ծառայելիս հանդիպում ես շատ մարդկանց

Քույր Պողոսովան (աջում) իր զուգընկեր միսիոների հետ ուսուցանում է ավետարանը մի ընտանիքի:

ու շատ հարցեր են առաջանում: Երբ սկսեցին հարցեր առաջանալ, դրանք իրենց հետ բերեցին կասկածներ, ես սովորեցի, որ չպետք տրվես այդ կասկածներին ու հարցերին, տեղի տաս դրանց, այլ պետք սովորես դրանցից: Շատ էր պատահում, երբ մարդիկ հարց ունեին, իսկ ես պատասխան չունեի: Այդ ժամանակ Սուրբ Հոգին միշտ օգնում էր: Երբ ուսուցանում ես խոնարհաբար, Հոգին օգնում է գտնել պատասխանները և ականատես ես լինում, թե մարդիկ ինչպես են վկայություն ստանում Հոգով ուսուցման շնորհիվ, և դրանք փոքրիկ հրաշքներ են, որոնք հաճախ են պատահում միսիայում: Ես փոխեցի իմ վերաբերմունքը հարցերի նկատմամբ: Այժմ, երբ հարց է առաջանում, ես ուրախանում եմ, որ սովորելու հնարավորություն է ստեղծվել ինձ համար:

Միսիան այն ժամանակն է, երբ շատ դժվարություններ և փորձություններ են լինում, ինչի հետևանքով կարող ես կորցնել վկայությունդ կամ հակառակը՝ ամրացնել այն: Մի պահ ես շատ հուսահատված էի և մի քանի ամիս շարունակ աղոթում էի, որ Աստված ինձ օգներ: Սակայն պատասխանն անմիջապես չէր գալիս: Մի օր ես շատ ուժեղ գլխացավ ունեի և խնդրեցի երեցներին, որ քահանայության օրհնություն տան ինձ: Երբ օրհնություն էի ստանում, երեցը արտաբերեց իմ աղոթքի պատասխանը, և ես հասկացա, որ քահանայության օրհնությունը շատ մեծ զորություն ունի և այդպիսով ստացա ուժ, որն ինձ հարկավոր էր ծառայելու համար: Սա մի մեծ փորձառություն էր, որը երբեք չեմ մոռանա:

Միսիայի ժամանակ ինձ առավել հոգեհարազատ էր Մորոնի 9.6-ում պարունակվող սուրբ գրության այս հատվածը. «. . .չնայած նրանց կարծրասրտությանը, ե՛կ գործենք ջանասիրաբար. քանզի եթե մենք դադարենք գործելուց, մենք պիտի բերվենք դատապարտության տակ. քանզի մենք գործ ունենք կատարելու, մինչ այս կավե տաղավարում ենք, որպեսզի կարողանանք հաղթել ամեն արդարության թշնամուն, և մեր հոգիները հանգչեն Աստծո արքայությունում»: Ծառայելիս այս հատվածը ինձ ուժ էր տալիս ավելի ջանասիրաբար կիսվել ավետարանով, որովհետև մենք այդ նպատակով էինք կանչված և պատասխանատվություն էինք կրում այլ մարդկանց համար:

Ես շատ ուրախ եմ, որ հնարավորություն եմ ունեցել ծառայել միսիայում, քանի որ աճել եմ հոգեպես և ամրացել է իմ վկայությունը: Ծառայելիս մենք ուրախություն ենք գտնում: Ես ցանկանում եմ, որ բոլոր երիտասարդները ծառայեն և ունենան այդ ուրախությունը: ■

Գործերն ավելի բարձր են խոսում, քան խոսքերը

Քույր Ջոնսոն, միսիոներ

Աստված սիրում է իր զավակներին՝ մեզանից յուրաքանչյուրին: Օգնելու համար մեզ մոտենալ Իրեն, Նա տվել է մեզ այնքան շատ օրհնություններ և միջոցներ՝ Աստվածաշունչ, Մորմոնի Գիրք, մարգարեներ, գերագույն համաժողովներ, lds.org կայքը, աղոթքներ, Սուրբ Հոգի, ընտանիքներ, և այլն: Բայց այս միջոցներից քանի՞սն ենք մենք փաստացի օգտագործում: Երկու որդիների մասին առակում կարդում ենք. «Մի մարդ երկու որդի ուներ. և եկավ առաջինին ասեց. Որդի՛, գնա այսօր իմ այգումը բան արա: Նա էլ պատասխանեց և ասեց. Չեմ կամենում. բայց հետո զղջաց և գնաց: Եվ մյուսի մոտ գնաց և ասեց այնպես. նա էլ պատասխանեց և ասեց. Կ՛գնամ, տեր. և չգնաց: Հիմա այս երկուսից ո՞րն արավ հոր կամքը» (Մատթեոս 21.28–31):

Որքա՞ն հաճախ ենք մենք խոստումներ տալիս, որոնք գիտենք, որ չենք կարողանալու պահել: Ճիշտ է, մենք գուցե միշտ լավ

մտադրություններ ունենք, բայց Քրիստոսն ի՞նչ է փորձում սովորեցնել մեզ այս առակով: Բազմաթիվ անգամ Քրիստոսն ասել է. «Այս ժողովուրդը իրան բերանովն է մոտենում ինձ, և շրթունքներովն է ինձ պատվում, բայց իրանց սիրտն ինձանից հեռացած ջոկված է: Զուր տեղն են պաշտում ինձ՝ նրանք վարդապետություններ են ուսուցանում, որոնք մարդկանց պատվիրաններն են, և նրանք ունեն աստվածայնության կերպարանք, բայց ուրանում են նրա զորությունը» (Մատթեոս 15.8–9, Մարկոս 7.6–7, Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.19):

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես կցանկանայի կոչ անել ձեզանից յուրաքանչյուրին՝ հարցնել ինքներդ ձեզ՝ արդյո՞ք դուք անում եք այն ամենն, ինչ կարող եք, որպեսզի հետևեք Քրիստոսի օրինակին և Նրա ուսմունքներին: «Շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23): Ապրելով այս ավետարանի ուսմունքներով, ես տեսել եմ, որ լույսն ու հույսը մտել են իմ կյանք: Քրիստոսը մեր կատարյալ օրինակն է և, հետևելով Նրա օրինակին բոլոր բաներում, մեզ խոստացվել է, որ մենք կզգանք իրական ուրախություն: Այսպիսով, սովորեք Նրանից, լսեք Նրա խոսքերը և քայլեք հեզությամբ Նրա հոգով: Մորմոնի Գրքի վկայությունը Հիսուս Քրիստոսի և Նրա ուսմունքների մասին է, Աստծո գործերի մասին մարդկանց հետ, և նրա մասին, թե մենք ինչ պետք է անենք, որպեսզի վերադառնանք կրկին ապրելու մեր Երկնային Հոր հետ: Տող առ տող, քիչ-քիչ այն կգա: Ես վկայում եմ ձեզ, որ Քրիստոսն է այս Եկեղեցու գլուխը, և եթե հետևենք Նրան բոլոր բաներում, մենք կօրհնվենք: ■

Քույր Ջոնսոն

Լենա Պողոսովա

Իմ կյանքի ամենակարևոր որոշումը

Լենա Պողոսովա, Երևան ճյուղ

Ես սկսեցի մտածել միսիայի մասին այն ժամանակ, երբ քույրս՝ Վարվառան, նոր էր մտադրվել միսիա գնալու: Նա շարունակ խոսում էր միսիա գնալու իր որոշման մասին, և ես նույնպես հետաքրքրվեցի: Նախ, ես որոշեցի գնալ տաճար: Տաճարում ես հաստատեցի իմ մտքում, որ ցանկանում եմ ծառայել միսիայում, երբ տաճարի մոտ ես տեսա միսիոներներին, որոնք կրում էին միսիոների կրծքանշանները: Ես նույնպես ցանկացա դառնալ միսիոներ:

Միսիայի առաջին ամիսների ընթացքում Աստված ցույց էր տալիս ինձ իմ թուլությունները և օգնում էր, որ հաղթահարեմ դրանք, իհարկե, ինձանից մեծ ջանքեր էին պահանջվում: Փորձությունների միջոցով Աստված իմ թուլությունները ուժեղ կողմեր էր դարձնում ինձ համար: Օրինակ, միսիայից առաջ ես ունեի հատկանիշներ, որոնք, իմ կարծիքով, ինձ պետք չէին գալու, բայց ես տեսա, որ այդ հատկանիշները հենց այն էին, ինչ ինձ պետք էր այնտեղ և շատ օգնեցին ծառայության ընթացքում:

Ես մտահոգ էի, թե ինչպես անենք, որ մարդիկ մկրտվելուց հետո ամուր անդամ լինեն և չհեռանան Եկեղեցուց, և դա հանգեցրեց նրան, որ մարդկանց սովորեցնելուց առաջ նախ ես ինքս սկսեցի խորհել ապաշխարության և Քրիստոսի քավության մասին իմ կյանքում: Եվ ես հասկացա, թե ինչպես է Քրիստոսի քավությունը գործում իմ կյանքում, և դա նպաստեց իմ հոգևոր աճին:

Աշխարհում այնքան շատ բաներ կան, որ Աստված տալիս է մեզ, բայց մենք չենք նկատում: Միսիայի ընթացքում ես սովորեցի նկատել այն փոքրիկ հրաշքները, որոնք չէի նկատում միսիայից առաջ: Հրաշքները շատ են, սակայն եթե մարդիկ հաճախ դրանք չեն տեսնում իրենց կյանքում, չի նշանակում, որ դրանք չկան:

Միսիայում ծառայելու որոշումը իմ կյանքի ամենակարևոր որոշումներից մեկն էր: Այն փորձառությունը, որը ես ձեռք եմ բերել միսիայի ժամանակ, երբեք չեմ մոռանա: Հիմա դա շատ է օգնում ինձ և գիտեմ, որ կօգնի հետագա կյանքիս ընթացքում: Միսիան մեծ ուրախություն է: ■

ARMENIAN